



ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՈՐ ՀԻՄՆԱԳՐԱՄ

ԱՂՆՋԱՁՈՐ, ԹԱՌԱԹՈՒՄԲ, ՔԱՐԱԳԼՈՒԽ, ՍԱԼԼԻ

ԳՅՈՒՂԵՐԻ
ՊԱՏՄԱԿԱՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE



Հեղինակ
Գիտական խմբագիր
Խմբագիր-սրբագրիչ
Համակարգչային ծնավորող
Չափագրությունների հեղինակ

Սամվել Կարապետյան
Էմմա Աբրահամյան
Հասմիկ Հովհաննիսյան
Արմեն Գևորգյան
Աշոտ Հակոբյան

Սամվել Կարապետյան
Աղնջաձոր, Թառաթունք, Քարագլուխ և Սալի գյուղերի պատմական հուշարձանները. / Ս. Կարապետյան.- Եր.: ՀՃՈՒ
հիմնադրամ, 2019 - 36 էջ:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում
Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության հիմնադրամին՝
գրքի ստեղծման և տպագրության համար

Շնորհակալ ենք աղնջաձորցի Արմեն Բայաթյանին՝
հնավայրեր առաջնորդելու համար

Հայրենիքն անհուն նվիրումի և ոգեղենության միակ
աղբյուրն է, ազգերի գոյությունն իմաստավորած գերակա
արժեքը:

Հայրենիքն ակունքն է մարդուն տրված ազնվագույն և
ամենից անկեղծ զգացումի՝ հայրենասիրության, որի խմորիչն էլ հայրենաճանաչությունն է:

Այո՛, սիրելու համար պետք է ճանաչել, ուստի և Հայրենիքը սիրելու համար պայման է, որ անհատը լինի հայրենաճանաչ:

Ազգերի պատմությունը ցույց է տվել, որ բազում մահաբեր խտրերով դարերը պատվով են հաղթահարել այն ազգերը, որոնց հայրենաճանաչությունը բյուրեղացել և վերածվել է Հայրենիքի պաշտամունքի, որի պայմաններում

հաղթանակն ապահովված է եղել նույնիսկ անկախ ուժերի քանակական անհամաչափությունից:

Ոգեղեն արժեքներով առաջնորդվող և ըստ այդմ՝ ուժեղ, իսկ սրանով էլ պայմանավորված՝ երջանիկ հասարակություն ունենալու համար անքննելի անհրաժեշտություն է, որ նույն հասարակության յուրաքանչյուր մասնիկ լինի հայրենաճանաչ, որն էլ բնականորեն սկիզբ է առնում հարազատ ծննդավայրի ճանաչողությունից:

Հուսով ենք, որ սույն գրքույկն իր համեստ ներդրումը կունենա մեզանում այնքան անհրաժեշտ հայրենաճանաչության խորացման գործում:

Կեցցեն մեր հայրենաճանաչ հայրենակիցները, փառք սրբազան Հայրենիքին:

ԱՂՆՋԱՉՈՐ ԳՅՈՒԴԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Տեղադրություն. գտնվում է Եղեգնաձոր քաղաքից ուղիղ գծով 17,2 կմ հյուսիս-արևմուտք: Ծովի մակերևույթից բարձր է 1630-1675 մ:

Անվանում. գյուղի պատմական անունը մոռացության է մատնվել: Ավանդաբար վկայվել է, որ հնում կոչվել է Դրունք (Տրունք) և Դեգպանարտ: ԺԹ դարի վավերագրերում հանդիպում է եկվոր քյուրքական ցեղերից ժառանգված օտարոտի՝ Աղքենդ կամ Ենգիջա անվանումով: Այնուհետև կոչվել է Լեռնանցք, իսկ 1968 թ. վերանվանվել՝ Աղնջաձոր:

Բնակչություն. գյուղում և նրա մերձակայքում պահպանված նյութական մշակույթի հուշարձանները վկայում են, որ բնակավայրն առանձնապես ծաղկում և մարդաշատ է եղել զարգացած միջնադարում, մասնավորապես՝ Օրբելյան իշխանների տիրապետության ժամանակաշրջանում: Հայա-

բափ է եղել Շահ-Աբասի կազմակերպած բռնագաղթի հետևանքով: Այնուհետև միառժամանակ ամառյի մնաց հետո՝ ԺԷ-ԺԸ դարերում, բնակեցվել է քյուրքական ծագմամբ մահմեդական ցեղերով: Վերջիններս գյուղը լքել են 1910-ական թթ. վերջերին: 1925-1927 թթ. հաստատվել են հարևան Զարագուլիս և Թառաթումբ գյուղերից փոխադրված հայերը:

Աղնջաձորի բնակչության թվաքանակը մատնանշող տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը¹.

տարեթիվ	հայ	քուրք
1897		670
1926	300	
1939	621	
1959	577	
1970	502	
1979	478	
2001	449	
2004	427	

¹ Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, Երևան, 2008, էջ 15:




Պատմական հուշարձաններ. Աղրնջաձորում և նրա մերձակայքում առկա են երկու իջևանատուն, գյուղատեղի, խաչքարերով գերեզմանոց, եկեղեցատեղի, ինչպես նաև պատմության մի կարճ ժամանակահատվածի արգասիք՝ մահմեդական գերեզմանոց:

Եկեղեցատեղի. ԺԸ-ԺԹ դարերում գյուղում հաստատված մահմեդականները նախքան հեռանալը, ցավոք, ար-



Աղնջաձոր գյուղը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2017 թ.)



Աղմզաձոր գյուղի գլխավոր հատակագիծն ըստ Google Earth-ի 2018 թ. արբանյակային լուսանկարի (հրատարակության պատրաստումը՝ Ա. Հակոբյանի, 2019 թ.)

դեն հասցրել էին իսպառ անհետացնել երբեմնի եկեղեցին, և այժմ տեղացիները եկեղեցատեղին մատնանշում են ոչ թե տեղում պահպանված նյութական մշակույթի մնացորդների, այլ պարզապես ըստ ավանդված վկայությունների: Համեմայն դեպս, այնտեղ, որտեղ տեղորոշվում է երբեմնի եկեղեցին, ներկայումս պահպանվել են միայն մի քանի տեղահիան և կոտրատված խաչքարեր (N 39°54'04.52", E 45°14'48.84", ծ. մ. 1647 մ):



ԺԳ-ԺԵ դդ. խաչքարերի բեկորներ եկեղեցատեղիի տարածքում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



ԺԸ-ԺԹ դդ. գերեզմանական հուշարձաններ մահմեդական գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Մահմեդական գերեզմանոց. վերոնշյալ հնավայրից ուղիղ գծով 560 մ (N 39°53'49.10", E 45°15'01.33", ծ. մ. 1624 մ), իսկ մայրուղուց հազիվ 80 մ հեռու տարածվում է գյուղի՝ ուշ շրջանի մահմեդական բնակիչներից ավանդված գերեզմանոցը՝ սակավաթիվ հուշարձաններով: Այստեղ ուշագրավ է երկու անարձանագիր գերեզմանաքար (մեկը՝ խոյատապան, մյուսը՝ օրորոցաձև):

Յավար գյուղատեղի. գտնվում է գյուղի կենտրոնից ուղիղ գծով 1,2 կմ հյուսիս-արևմուտք (N 39°54'42.48", E 45°15'17.43", ծ. մ. 1901 մ): Տեղում հազիվ նշմարվող տնատեղերից զատ՝ պահպանվել են միջնադարյան գերեզ-




ԺԳ-ԺԶ դդ. խաչքարեր Յավար գյուղատեղիի գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

մանոցի մնացորդները՝ ԺԳ-ԺԶ դդ. կանգուն կամ տեղահիան, մաս բեկորված մի քանի խաչքարերով:

Իջևանատուն. գտնվում է Աղմզաձորից 2,2 կմ հյուսիս (N 39°55'16.32", E 45°14'27.31", ծ. մ. 1765 մ):

Ունի միանավ հորինվածք, որի կիսաշրջանաձև թաղը ներքուստ պահում են 6 զույգ որմնասյուների վրա հենված թաղակիր կամարները: Միակ մուտքը բացված է դեպի հարավ-արևմուտք



Իջևանատան հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի, 2018 թ.)




Իջևանատունը հարավ-արևմուտքից (լուս.՝ Մ. Կարապետյանի, 2018 թ.)

նայող վաղուց ի վեր փլուզված ճակատից: Կառուցված է համակ սրբատաշ բազալտ քարով: Արտաքին չափերն են՝ 23,3 x 10,6 մ: Աղոտ լուսավորությունն ապահովել են զույգ երդիկները: Որմերի պահպանված հատվածները վիմագրեր չեն պարունակում, սակայն շինարարական առանձնահատկու-



Հատվածներ իջևանատան ներքին ծավալներից (լուս.՝ Մ. Կարապետյանի, 2018 թ.)



Մանրամասներ իջևանատան ներքին ծավալներից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

թյունները հուշում են, որ իջևանատունը կառուցվել է ԺԳ դարավերջին կամ ԺԴ դարասկզբին:

Խաչքարերով զերեզմանոց. իջևանատնից ընդամենը 140 մ հարավ-արևելք (N 39°55'12.32", E 45°14'30.55", ծ. մ. 1755 մ)՝ հարավարևմտահայաց բլրակողին տարածված միջնադարյան զերեզմանոցում առկա են շուրջ մեկ տասնյակի հասնող զեղաքանդակ,



Հատված իջևանատան մոտ գտնվող զերեզմանոցից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



Իջևանատան մոտ գտնվող զերեզմանոցի խաչքարերից մի քանիսը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

սակայն անարձանագիր խաչքարեր, որոնց ոճական և գեղարվեստական առանձնահատկությունները բնորոշ են ԺԲ-ԺԴ դարերին:

Կապույտ բերդ. այս անվամբ հայտնի ժայռազանգվածի վրա, որը գտնվում է գյուղից 3 կմ հյուսիս (N 39°55'45.21", E 45°14'35.49", ծ. մ. 1985




Երբեմնի Կապույտ բերդ անվամբ հայտնի ժայռազանգվածը հյուսիսից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



Երբեմնի Կապույտ բերդ անվամբ հայտնի ժայռազանգվածը հյուսիսից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

մ), համաձայն գյուղաբնակների վկայության, տակավին 1960-70-ական թթ. նշմարվել են պարսպապատերի հիմնահատվածներ, որոնք, ցավալիորեն անցած տասնամյակների ընթացքում շարունակաբար քայքայվելով, իսպառ անհետացել են:

Օրբելյանների (Մելիմի) իջևանատուն. գտնվում է Աղնջաձորից ուղիղ գծով 5,4 կմ հյուսիս՝ Վարդենյաց լեռնանցքի հարավային կողմում՝ նրանից 380 մ հեռու և գրեթե 70 մ ցած (N 39°56'58.67", E 45°14'09.68", ծ. մ. 2345 մ): Բաղկացած է միմյանց կից երկու կառույցներից, որոնցից ավելի ընդարձակն ունի եռանավ բազիլիկ հորինվածք (արտաքին չափերն են՝ 29 x 15,5 մ): Վերջինիս երկլանջ ծածկի ներքո առնված տանիքը ներքուստ պահում են 7 զույգ սյուներին հանգչող թաղակիր կամարները: Միակ մուտքը բացված է արևելյան ճակատից՝ նույն կողմից կցված միանավ սրահի մեջ, որի հարավային որմունք էլ գտնվում է ի-



Օրբելյանների իջևանատան (հոգետան) հատակագիծը և նախասրահի հարավային ճակատից բացված շքամուտքը (արտատպված՝ Վ. Հարությունյանի «Միջնադարյան Հայաստանի իջևանատներն ու կամուրջները»/Երևան, 1960, էջ 21/և Ը. Ազատյանի «Շքամուտքերը IV-XIV դդ. Հայաստանի մոնումենտալ ճարտարապետության մեջ»/Երևան, 1987/ գրքերից)

ջևանատան գլխավոր մուտքը՝ արաբերեն շինարարական արձանագրությամբ բարավորով հանդերձ: Լուսամուտներ չկան, դրանց փոխարեն առկա են այդ խնդիրը կարգավորող 11 երդիկներ: Վերջիններիցս 3-ը բացված են կենտրոնական, իսկ 4-ական՝ եզրային նավերի թաղերի մեջ, ընդ որում, առաջիններն ունեն ութանիստ բացվածք և հարդարված են ստալակտիտներով, իսկ երկրորդները պարզ քառանկյուն բացվածքներով են և չեն կրում հարդարանքի որևէ տարր: Սրահի արևմտյան ծայրում առկա են ընդհանուր մակերեսից խուլ որմերով զատված երկու միանման սենյակներ:

Չափերով շատ ավելի սահմանափակ նախասրահի (արտաքին չափերն են՝ 11,7 x 7,25 մ) ծածկը ևս երկլանջ է, որը կենտրոնական մասում նույնպես մի երդիկ ունի:




Օրբելյանների իջևանատունը (հոգետունը) հյուսիսից և հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



Օրբելյանների իջևանատան (հոգեխուր) նախասրահի հյուսիսից, բարձրաքանդակներ մուտքի երկու կողմերում, երդիկներն արտաքուստ և ներքուստ (լուս.՝ Մ. Կարապետյանի, 2018 թ.)



Հատվածներ Օրբելյանների իջևանատան (հոգետուն) ներքին ծավալներից և շքամուտքի ստալակտիտավոր հարդարանքը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



Օրբելյանների իջևանատան հայերեն (1332 թ.) և արաբերեն (1329 թ.) շինարարական արձանագրությունները (լուս. և գրչ.՝ Մ. Կարապետյանի, 2018 թ.)

Նախասրահի ներսում՝ արևելյան որմի՝ դեպի թաղ ձգվող կորուքյան երկու շարք քարերի վրա, առկա է հայերեն շինարարական 12 տողանի արձանագրությունը, որը վկայում է իջևանատան (արձանագրության մեջ հիշ-

ված է որպես հոգետուն)՝ 1332 թ. Օրբելյան իշխանների նախաձեռնությամբ և ջանքերով կառուցված լինելու մասին.

Յանուն ամենակարող հզարին ա(ստուծո)յ, ի թվ(ին) ՉՉԱ (1332), յաշխարհակալութե(ան) Բուսաիդ դանին, ես՝ Չեսար՝ որդի իշխան/աց իշխանին Լիսպարտի եւ մարն Անահին, թռն Իւանէի եւ եղբ/արց իմ առիծագեղ իշխանացն Բիրթէլին եւ Սմբատա եւ Էլիկումին՝ յա/զգէ Աւրպէլէնց եւ կենակից իմ Խորիշահ, դուստր՝ իշխանին Վարդան/նա եւ Դաւիին քրոջ յարենց,

ազգէ՝ Սէնիքարենմանց ի հալալ արդենց մերոց / շինեցաք զհոգետունս ի փրկութի(ին) հոգոց մեր եւ ծնող/աց եւ եղբարց մեր ի Բ(րիստո)ս ննջեցելոց եւ կենաց / արց իմոց եւ որդոց Սարքսի եւ Յովանիսի քահ(անայ)ի, / Բրդին եւ Վարդանա. աղաչեմք զպատահողսդ յիշել զմե/զ ի Բ(րիստո)ս: Սկիզբն տանս ըստունապ(ե)տին Եսառ եւ կա/տարումն աղաթիւք նորա, ի թվիս ՉՉԱ (1332):

Գրակ. Մատենադարան, Գ. Հովսեփյանի արխիվ, թղթ. 91, վավ. 12, թ. 35-36:

Հրատ. Դիվան հայ վիմագրության, պրակ III, Երևան, 1967, էջ 177-178:

Ծանոթ. 1898-99 թթ. ընդօրինակել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի Բ լսարանի ուսանող տփխիսեցի Միլիտոն Վարդանյանը: Նախկին հրատարակություններում առկա են որոշ բացթողումներ: Գրչագրական առանձնահատկությունները հուշում են, որ 7-րդ տողում շինեցաք բառից հետո փորագրումը շարունակել է մեկ այլ հեղինակ:

Ցավոք, արաբերեն արձանագրությունը ցարդ վերծանված չէ: Այն տեղ չի գտել նաև Հայաստանի արաբերեն վիմագրերին նվիրված հիմնարար աշխատության մեջ²:


² Хачатрян А., Корпус арабских надписей Армении VIII-XVI вв., выпуск I, Ереван, 1987.

ԹԱՌԱԹՈՒՄԲ ԳՅՈՒՂԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Տեղադրություն. գտնվում է Եղեգնա-
ծոր քաղաքից ուղիղ գծով 15,8 կմ հյու-
սիս-արևմուտք: Ծովի մակերևույթից
բարձր է 1635-1685 մ:

Անվանում. վկայվել է նաև Թառա-
թուն անվանաձևով:

Պատմություն. գավառի հին բնա-
կավայրերից է, որը, ըստ պահպան-
ված պատմական հուշարձանների
ժամանակագրական ընդգրկման, ա-
ռավել մարդաշատ և ծաղկուն է եղել
ԺԲ-ԺԳ դարերում: Որպես հայաբնակ
գյուղ՝ գոյությունը պահպանել է մինչև
ԺԷ դարի սկզբները, ապա ամայացել
Շահ-Աբասի կազմակերպած բռնա-



Թառաթունը գյուղը հարավ-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.) և գյուղի գլխավոր հատակագիծն ըստ Google
Earth 2018 թ. արբանյակային լուսանկարի (հրատարակության պատրաստումը՝ Ա. Հակոբյանի, 2019 թ.)



գաղթի հետևանքով: Վերստին հայա-
բնակ է դարձել 1830 թ.:

Բնակչություն. ավանդաբար վկայ-
վել է, որ ներկայիս գյուղի հիմնադիր-
ներն էին ռուս-պարսկական պատե-
րազմի ավարտից հետո՝ 1830 թ.,
Պարսկահայքի Խոյ գավառի Դորուղ
գյուղից փոխադրված 10 տուն հայե-
րը¹:

Անցած գրեթե երկու դարերի ըն-
թացքում Թառաթունի բնակչության
թվաքանակին առնչվող տվյալների
համադրումը ներկայացնում է հետև-
յալ պատկերը².

տարեթիվ	հայ (շունչ)
1831	56
1876	17 տուն 182
1886	27 տուն
1893	232
1914	348
1931	465
1970	641
1979	487
2001	555
2004	464

¹ 1830 թ.-ից հետո էլ՝ շուրջ կես դար, Դորուղը շարունակել
է հայաբնակ մնալ, սակայն ԺԹ դարավերջին այն ար-
դեն զուտ թուրքաբնակ էր:

² Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բա-
ռաբան, Երևան, 2008, էջ 81: Տե՛ս նաև **Քաջբերունի**,
Ճանապարհորդական նկատողություններ, Երևան,
2003, էջ 133: ՀԱԴ, ֆ. 47, ց. 1, գ. 345, ք. 9: **Էփրիկեան Ս.**,
Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, Կ. Բ, Վենե-
տիկ, 1903-905, էջ 18: Кавказский календарь на
1915 г., Тифлис, 1914, с. 186.



Սր. Խաչ եկեղեցու մնացորդները Խոյ գավառի Ղորուղ գյուղում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2011 թ.)

Պատմական հուշարձաններ. գյուղում և նրա սահմաններում պահպանվել են 1896 թ. հիմնովին վերակառուցված եկեղեցին, միջնադարյան խաչքարաշատ գերեզմանոցը և մի քանի խաչքար պարունակող Մարտոյի խաչ հնավայրը:

Եկեղեցի. 1895 թ. Թառաքումբում հիշվում է Սր. Աստվածածին անվամբ ծխական եկեղեցի³, սակայն արդեն 1925 թ. նույն («քարեա, հոյակապ») եկեղեցին վկայվել է Սր. Հովհաննես անվամբ⁴: Սրանից հետևում է՝ նշյալ տարիների միջակայքում եկեղեցում կատարվել են կարևոր նորոգություններ, որից հետո էլ այն վերածվել է և վերանվանվել: Այս հարցը պարզում է հյուսիսային ճակատից բացված մուտքի բարավորին փորագրված երկտող արձանագրությունը.


3 ՀԱԴ, ֆ. 47, ց. 1, գ. 345, թ. 9:

4 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 289, թ. 47:



Ս(ուր)ք Օվանէս եկեղ(ե)ցի / թվին Ռ-ՅԽԵ-1896 ամի:

Սր. Հովհաննես եկեղեցին գտնվում է գյուղի երկու մեծ թաղերն իրարից բաժանող ձորակի աջ կողմում՝ հյուսիսահայաց լանջին (N 39°53'26.52", E 45°15'11.34", ծ. մ. 1619 մ): Ունի եռանավ բազիլիկ հորինվածք (արտաքին



Սր. Խաչ եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի, 2018 թ.)

չափերն են՝ 17,3 x 9,7 մ): Երկթեք ծածկի ներքո առնված տանիքը հենված է քառակուսի կտրվածքով երկու զույգ սյուների և որմնասյուների վրա հանգչող կիսաշրջան թաղակիր կամարների: Արևելյան կողմում ունի կիսա-



Սր. Հովհաննես եկեղեցին հյուսիսից և հյուսիս-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

շրջան եզրագծով ավագ խորան և ուղղանկյուն հատակագծով երկու ավանդատուն: Բացի հյուսիսային ճակատից բացված գլխավոր մուտքից՝ երկրորդական մի մուտք էլ առկա է արևմտյան ճակատում: Լուսավորությունն ապահովել են 6 լուսամուտները, որոնցից 3-ը բացված են արևելյան, 2-ը՝ հյուսիսային և 1-ը՝ արևմտյան ճակատներից:

Կառուցված է անմշակ, կիսամշակ և սրբատաշ քարով: Վերջիններս գործածված են կառույցի առավել պատասխանատու հատվածներում (սյու-



Մր. Հովհաննես եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք և արևմուտք (լուս.՝ Մ. Կարապետյանի, 2018 թ.)

Եկեղեցու հյուսիսային մուտքը, բարավորը և խաչքար ավագ խորանին (լուս.՝ Մ. Կարապետյանի, 2018 թ.)

ներ, որմնասյուներ, թաղակիր կամարներ, անկյունաքարեր): Որմերում ագուցված են միջնադարյան գեղաքանդակ մի քանի խաչքարեր: Դրանցից արձանագիր է միայն մեկը՝ ՋՀԱ (1522)

թվականից, որն էլ եկեղեցու կառուցման ժամանակ հարմարեցվել է որպես հյուսիսային ավանդատան մուտքի բարավոր:

Գերեզմանոց. գտնվում է գյուղի հարավարևելյան եզրին (N 39°53'06.02", E 45°15'26.95", ծ. մ. 1659 մ): Ջրաղեցնում է մոտավորապես 160 x 140 մ մակերես:



Խաչքարեր Սր. Հովհաննես եկեղեցու ավագ խորանին և հյուսիսային ավանդատան ճակատին, ԺԵ-ԺԶ դդ. և 1522 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Իր ընդարձակությամբ և թեկուզ տեղահան, սակայն պահպանված մեծաթիվ խաչքարերով հնավայրը միանգա-



Դրվագներ Թառաթումբի գերեզմանոցի հին հատվածից (լուս.՝ Բ. Քոթրոշյանի, 2018 թ.)

մից հուշում է, որ առնվազն ԺԲ դարից սկսած՝ հայահոծ բնակավայրը գոյությունը պահպանել է մինչև շահաբասյան բռնազաղթը: Ուստի, եթե դեռ հաշվի չառնենք Թառաթումբի այլ հնա-

վայրերում հին հուշարձանների գոյությունը, ապա հենց միայն այս գերեզմանոցում պահպանված խաչքարերն ու տապանաքարերը բավարար են վկայելու, որ երախտաշատ Քաջբերու-



ԺԲ-ԺԴ դդ. խաչքարեր Թառաթունի գերեզմանոցի հին հատվածում (լուս.՝ Բ. Քորթոյանի, 2018 թ.)

նին այս մեկ դրվագում սխալվել է՝ կարծելով, թե իբր «...Թառաթուն գյուղը, որ չի տալիս ոչ մի հնության առարկա»⁵:


5 Քաջբերունի, նշվ. աշխ., էջ 133:

Հարկ է նկատել, որ ընդհանուր առմամբ Թ-ԺԱ դարերին բնորոշ ոճական-գեղարվեստական առանձնահատկություններով հանդերձ՝ գերեզմանոցում առկա հնատիպ խաչքարե-

րի մեծ մասը (բացառությամբ թերևս երկուսի), այնուամենայնիվ, ԺԲ դարից ավելի հին լինել չի կարող, իսկ վերջինները թվագրելի են ԺԶ-ԺԷ դարերով: Գերեզմանոցում պահպանված



ԺԳ-ԺԶ դդ. խաչքարեր Թառաթումբի գերեզմանոցի հին հատվածում (լուս.՝ Բ. Զորթոշյանի, 2018 թ.)



միակ թվակիր խաչքարը հայոց ՉԽԹ
թ.-ից է.

Թ(վին) ՉԽԹ (1300):

Հրատ. առաջին անգամ:

Ինչ վերաբերում է տապանաքարե-
րին, որոնք քանակապես գերազան-
ցում են խաչքարերին, ապա սրանց
մեջ ուշագրավ է ուղղանկյուն հորին-
վածքով մեկը, որի չորս քողերն արձա-
նագիր է, իսկ երկայնական զույգ նիս-
տերը պատված են կենցաղային թեմա-
ներով պատկերաքանդակներով: Հա-
կառակ առերևույթ բավականաչափ
լավ պահպանված արձանագրության,



Թառաքումբի գերեզմանոցի հին հատվածում պահպանված խաչքար, 1300 թ. (լուս.՝ Բ. Քորթոշյանի, 2018 թ., գրչ.՝ Մ. Կարապետյանի, 2019 թ.)



ԺՁ դարի տապանաքար Թառաթումբի գերեզմանոցի հին հատվածում (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018-2019 թթ.)

այնուամենայնիվ, տապանագիրը միայն մասնակի է վերծանվում: Ինչ վերաբերում է կերտման ժամանակաշրջանին, ապա ըստ գրչագրական և պատկերագրության ոճական և գեղարվեստական առանձնահատկությունների՝ թերևս կարելի է թվագրել ԺՁ դարով: Ահա այն, ինչը հնարավոր եղավ ընթերցել սույն տապանաքարին.

*Ես՝ Ավետիս, բաթ... կանգնեցի զա(յ)ս արձան ...սեկին / եղբայր Գաբրիել...
...ան թագն Նան|ազ խաչի ...նայն, ով
հո(ղ)ածին Բանախան... || ... || ...:*

Հրատ. առաջին անգամ:

Գերեզմանոցում առկա մնացյալ տապանագրերը վերաբերում են ԺԺ դարավերջին և Ի դարին: Ահա դրանցից մի քանիսը.



Այս է տ(ապան) Կուլաղի, / 1899:
Այս է տապան Եփրեմ / Գրիգորով,
1902 ամի:

Տապանատուն-դանբարան նեղ/ե-
ցեալ ի բնակարան. այս է պարոն / Ար-
դաշ Գեորգեան, ի ծընեալ / թվ(ի)ն 1881
ամի, վաղջանեալ / թվ(ի)ն 1902 ամի:

Այս է դապ(ա)ն / Գարաբեդ Նիգ(ո)-
ղո|սովին. 1911 թ.:

Այս է տապան Խաչատուր / Արվա-
զով, 191. ամի:

Այս է տապան Եփրեմին Խաչատու-
րով, 1919 ամի:

Սուրբ խ(ա)չս ի վերայ կանգնեց /
Լեվոն Հարությունով Ղազարեանի, / որ
փոխեցաւ առ ա(ստուա)ծ ի զվարդ հա-
սակի / եւ թողնի սիրասուն Սիսակ և
Գարնիկ որդի, / 1920 ամի, նկարիչ Վե-
րին Ադեամանցի / Յովհաննէս Սահա-
կով Գասպարեանի:

Որպէս վարդ բացվեց, / ինչու ծաղիկ
թառա|մեց, արեկագս խավարե|ց: Աս-
գականից բաժա|մեց. Աղասի Թաթե-
նո|եան, ի 1923 ամի:

Մանուկյան Ջա|վահիր Բայաթի, /
1861-1932, հիշատակ իր / որդիներից:



Խաչքարեր Մարտոյի խաչ հնավայրում (լուս.՝ Բ. Քոթոշյանի, 2018 թ.)

Ենգիբարյան Այեք / Գասպարի,
1868-1942, / իշատակ իր եղբոր / որդի
Վասիլից:

Հայրապետյան / Վարթիկ, 1880-
1944, հիշատակ / որդի Իվանից:

Հայրապետյան / Միքայել, / 1884-
1944, / հիշատակ որդի Իվանից:

Հայրապետյան Ովսանա Խաչա-
տ(ու)րի, / ծ. 1868, մ. 1945 թ., / ...հարա-
քէ գողից:

Մարտոյի խաչ. այս անվամբ են
հայտնի գյուղի հարավային եզրին (N
39°53'04.79", E 45°15'34.65", ծ. մ. 1639
մ)՝ այգիների մեջ միատեղ խմբված
ամբողջական կամ բեկորված մի քանի
խաչքարեր (բոլորն էլ՝ տեղահան), ո-
րոնցից երկուսն աչքի են ընկնում ան-
սովոր բարձրությամբ:

Հնավայրում առկա է նաև խաչքա-
րերի երկու պատվանդան:

Խաչքարերից մեկի ստորին հատ-
վածում հազիվ նշմարելի տառահե-
քերից ընթերցվում է.

Ես՝ Մարոս, կանգնեցի զխաչս...:

Հրատ. առաջին անգամ:





ՔԱՐԱԳԼՈՒԽ ԳՅՈՒՂԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Տեղադրություն. գտնվում է Եղեգնաձոր քաղաքից ուղիղ գծով 15,9 կմ հյուսիս-արևմուտք: Ծովի մակերևույթից բարձր է 1630-1675 մ:


Անվանում. գյուղն առնվազն միջնադարից ցարդ անկորուստ և անփոփոխ պահել է Քարագլուխ անունը:

Պատմություն. գրավոր աղբյուրներում առաջին անգամ հիշատակվում է 1316 թ. մի տապանագրում¹, սակայն գյուղում և մերձակայքում պահպանված նյութական մշակույթի հուշարձանները փաստում են նրա՝ խոր հնության մասին:

Բնակչություն. բազում դարեր հայաբնակ Քարագլխի բնիկները դեպի Պարսկաստան բռնագաղթի են ենթարկվել 1605 թ.: Ներկայիս գյուղաբնակների նախնիներն այստեղ են հաստատվել ռուս-պարսկական պատերազմի ավարտին՝ 1828 թ., Պարսկահայքի Խոյ և Սալմաստ գավառներից²:

¹ Դիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 175:

² Ցավոք, գավառների անուններից գատ՝ նույնիսկ մեծահասակ գյուղաբնակներն ավելին վկայել չեն կարողանում: Մասնավորապես հայտնի չեն Խոյ և Սալմաստ գավառների այն բնակավայրերի անունները, որտեղից 1828 թ. դուրս էին եկել քարագլխեցիների նախնիները:



- 1 - Սբ. Խաչ եկեղեցի
- 2 - Գերեզմանոց
- 3 - Թացեկի խաչքար
- 4 - Դավիթ քահանայի խաչքար
- 5 - Թուխ մանուկ վանք
- 6 - Գյուղատեղի և գերեզմանոց

Քարագլուխ գյուղի գլխավոր հատակագիծն ըստ Google Earth 2018 թ. արբանյակային լուսանկարի (հրատարակության պատրաստումը՝ Ա. Հակոբյանի, 2019 թ.)

Քարագլուխը գյուղախմբի առավել մարդաշատ գյուղն է, ընդ որում, իր այդ առաջնային դերով հայտնի է եղել նաև նախկինում:

տարեթիվ	հայ (շունչ)
1831	121
1876	35 տուն 370
1886	56 տուն
1897	789
1926	930
1939	1286
1959	807
1970	888
1979	729
1989	796
2001	831
2004	926
2012	831

Սք. Խաչ եկեղեցի. գյուղամիջում (N 39°53'35.65", E 45°16'07.19", ծ. մ. 1668 մ) ցարդ կանգուն եռանավ բազիլիկ հորինվածքով եկեղեցու (ըստ՝ 1925 թ. վկայության՝ «քարեա, հոյակապ»³) որմնեում առկա ավելի հին շինությանը պատկանող ճարտարապետական բեկորները հուշում են, որ այն հիմնվել է թերևս վերջինիս կառուցման պահին արդեն բավականաչափ ավերված եկեղեցու տեղում: Ի մասնավորի, ուշադրություն է գրավում հին եկեղեցու գեղաքանդակ և խաչազարդ բարավորը, որը, որպես հնավանդ հիշատակ, ա-



Հին բարավոր Սք. Խաչ եկեղեցու արևմտյան ճակատում (լուս.՝ Մ. Կարապետյանի, 2019 թ.)

գուցվել է նորաշեն եկեղեցու արևմտյան ճակատում:

3 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 289, ք. 47:



Տեսարաններ Քարագլուխ գյուղից (լուս.՝ Մ. Կարապետյանի, 2019 թ.)


Նոր եկեղեցու կառուցման մասին շինարարները որևէ վկայություն չեն բողել, իսկ գրավոր հիշատակություններն ընդամենը հայտնում են 1920-ական թթ. կատարված գողությունների

մասին (նախ կողոպտվել է 1924 թ. հուլիսի 27 լույս 28-ի գիշերը⁴, իսկ 1925 թ. հուլիսի 3-ին Չանախչի գյուղի մոտ

4 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 289, ք. 52:

քրդերը թալանել էին Արարատյան թեմի հոգևոր խորհրդի կողմից եկեղեցուն ընծայված իրերը⁵):

Եկեղեցին ունի եռանավ թաղածածկ բազիլիկ հորինվածք (արտաքին չափերը՝ 19,7 x 12,0 մ): Երկլանջ ծածկի տակ առնված տանիքը ներքուստ պահում են երկու զույգ սյուներն ու չորս զույգ որմնասյուները: Արևելյան ճակատին կիսաշրջան եզրագծով ավագ խորանի երկու կողմերում, առկա է ուղղանկյուն հատակագծով մեկական ավանդատուն: Լուսավորու-



Մր. Խաչ եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ս. Հակոբյանի, 2018 թ.)


թյունն իրականացված է վեց լուսամուտներով, որոնցից երեքը (մեկ) բացված են արևելյան, երկուսը (ավելի լայն)՝ հարավային, իսկ վերջինը (նույնպես լայն)՝ արևմտյան ճակատներից: Եկեղեցու սյուները, որմնասյուները, թաղակիր կամարներն ու անկյունաքարերը կառուցված են սրբատաշ, իսկ մնացյալները՝ կիսակոփ կամ անմշակ քարով: Կառույցը ներքուստ սվաղված է: Կենտրոնական նավի թաղակիր զույգ կամարների սվաղի շերտին առկա են որմնանկար պարզ զարդագույներ:

Եկեղեցու որմներում ինչպես արտաքուստ, այնպես էլ ներքուստ պատահական դիրքերով ագուցված են ամբողջական կամ բեկորված մի քանի խաչքարեր:



Մր. Խաչ եկեղեցին հարավ-արևմուտքից, արևմուտքից, հյուսիս-արևելքից և մուտքերը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2019 թ.)

⁵ ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 289, թ. 17:



Դրվագներ Սր. Խաչ եկեղեցու ներքին ծավալներից (լուս.՝ Ս. Կարապետյանի և Ս. Դանիելյանի, 2019 թ.)



ԺԳ-ԺԶ դդ. խաչքարեր՝ ագուցված Մր. Խաչ եկեղեցու որմներում (լուս.՝ Մ. Կարապետյանի, 2018 թ.)

Թացեկի խաչքար. գտնվում է գյուղի հարավային եզրին՝ մայրուղու հարևանությամբ (N 39°53'07.04", E 45°16'00.06", ծ. մ. 1591 մ): Անունը ստացել է խաչքարի ստորին մասում փորագրված վեցատող հիշատակագրից, որից երևում է, որ այն կանգնեցրել է ոմն Թացեկն իր և ծնողների հիշատակին.

Ի քվ(ին) ՉԼԹ (1290), ես՝ Թացե/կս, դուստր Սարգսի, որ/դոյ Խորիշահի, կանկ/նեցի զխաչս ի բարե/ախատու-



Թացեկի խաչքարը, 1290 թ. (լուս.՝ Մ. Կարապետյանի, 2018 թ.)


թ(իւ)ն ինձ եւ ծն/ողաց իմոց, յիշեցէք ի Ք(րիստո)ս:

Հրատ. Քաջքերունի, նշվ. աշխ., էջ 129: Դիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 177:

Թուխ մանուկ վանք. գտնվում է գյուղից հագիվ 1 կմ հյուսիս՝ հարավահայաց լեռնաճյուղի ուստին (N 39°54'32.88", E 45°16'39.63", ծ. մ. 1945 մ):

Վանական համալիրի ավերակներն ու շուրջբոլորը տարածված գերեզմանոցում պահպանված հուշարձանները (քառակող կոթող, խաչքարեր, տապանաքարեր) վկայում են, որ հնավայրը գոյություն է ունեցել առնվազն վաղ միջնադարից և իր նշանակությամբ ծառայել մինչև շահաբայան բռնազաղրը:



Տակավին 1876 թ. հնավայրի այցելումն նշել է. «...քարձրավանդակում կա մի եկեղեցու ավերակ՝ երեք սեղանով: Քարագլուխցիները տապանաքարերով և հասարակ քարերով սեղանների վրա մի փոքրիկ տնակ են շինել, գլուխը ծածկել փայտով, դարձրել են ուխտատեղի և մկրտել են Թուխ մանուկ կոչումով: Պատերի մեջի երկու քարերի կիսատ պռատ արձանագրությունը ցույց է տալիս, որ դրանք բերված են այլ շինությունից: Սեղանի առաջ երկու կարգով շարված են 16 հատ տապանաքարեր, որոնցից միայն մեկը ունի հետևյալ արձանագրությունը. *Այս է հան-*



Թուխ մանուկ վանքի հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի, 2018 թ.)



Թուխ մանուկ վանքը, համալիրի մատուռը և ճարտարապետական բեկորներ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



Թուխ մանուկ վանքի որմերում պահպանված արձանագիր քարերը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018-2019 թթ.)

գիստ պարոն Գրիգորի որդւոյ Դամուրդաշի, յօրժամ հասաւ վախճան իմ եղայ ի դուռն տաճարիս: Ով կարդէք յիշեցէք ի Քրիստոս և Քրիստոս զձեզ յիշէ ի կեանս, ք. ՋՁԲ (1533)»⁶:

Երեք սեղան՝ նույնն է, թե երեք խորան, որն էլ իր հերթին հուշում է՝ համալիրը բաղկացած էր պաշտամունքային նշանակության երեք շինություններից. տվյալ դեպքում հյուսիսից կից ավանդատնով միանալ եկեղեցին է (6,0 x 3,7 մ) և վերջինիս հարավից կից նույնպիսի հորինվածքով, սակայն չափերով ավելի փոքր (3,9 x 2,5 մ) մատուռը, որոնց արևմտյան ճակատներից բացված մուտքերն ամփոփվում են անմշակ քարով շարված որմերով մի գավթանման անկանոն շինության մեջ:

Թվում է, թե ի սկզբանե համալիրում եղել է նաև զմբեթավոր հորինվածքով մի եկեղեցի, քանի որ պահպանված արձանագրություններից մեկը հավաստում է տեղում «կաթողիկե» եկեղեցու գոյության մասին⁷: Ահա այդ արձանագրությունները.

[Ը]ինեցաւ կաթողիկէ եկեղեցիս ձեռամբ Յայրկենի եւ | իշխանութի(ւն). Կուկահն Բ(2) կա/նոնազլուխն անխաբան կա/տարէ, Բ(2) ար ժամ Կուկահն, [Ա] Ջահիլ/ խաթունին կատարիչ[ք արինին յա(ստուծոյ)]:

Հրատ. Դիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 174:
Ծանոթ. Մեր ընթերցմամբ Ջահիլ անձնանունը կասկածանքով վերծանվել է Ջայլամ:

Մյուս բեկորին.

Կամսան ա(ստուծոյ), ես՝ Մխիթար, որդի Խ... | ...(միաբանեցաւ սբ. եկեղեցոյս, զայս մարզս, որ Մա... | (Պռ)ռշի ողորմութեամբ Ա(ստուա)ծայտուր եւ ... | ...յնութե(ան) արուր պատարագն

⁶ Քաջբերունի, նշվ. աշխ., էջ 129-130:

⁷ Չենք կիսում երախտաշատ Քաջբերունու այն կարծիքը, թե ԺԹ դարում գյուղացիների շարած որմերում հանգրվան գտած արձանագիր քարերն այլ հնավայրերից են փոխադրվել: Գտնում ենք, որ դրանք հենց այս վանքի փլուզված որմերի երեսասպատի քարերից են, որոնք թեկուզ անփույթ, սակայն զոնե այս կերպով են պահպանվել և մեզ հասել:



Արձանագիր խաչքարերի բեկորներ (1233 թ. և ԺԳ դար)
Թուխ մանուկ վանքի գավթանման շինության ներսում
(լուս.՝ Մ. Կարապետյանի, 2018 թ.)

... / ...*(խ)*ափանէ Գճ հայրապետացն
նգ(ովեալ եղեցի):

Հրատ. Դիվան հայ վիճագրության, պրակ III, էջ 175:

Այլ բեկորներին.

ա ...*ն* աւրն... / ...*(կատար)*իչքն աւրի-
նեա(լ)...:

բ Մարկավ/ազ յիշեք:

գ ...*ին* ով խ... // Ես՝ Շահ... / ...սուրբ
ն... / ...տվին... / ...կատար...:



Խաչքարեր (ԺԳ դար) Թուխ մանուկ վանքի գավթանման շինության ներսում (լուս.՝ Մ. Կարապետյանի, 2018 թ.)





Խաչքարեր (ԺԳ դար) Թուխ մանուկ վանքի գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



Գավթանման շինության ներսում ագուցված կամ պարզապես որմերին հենված մեկ տասնյակից ավելի խաչքարեր կան: Նրանցից երկուսին առկա են արձանագրություններ.

ա Ի քվ(ին) ՈՁԲ (1233):

բ Կանգնեցաւ խայչս ի բա/րեխաւ-ստոթի(ւն) Տիրացու / քահանայի, որք երկրպագ(եք):

Արձանագիր ևս մեկ խաչքար էլ առկա է վանքի շուրջ տարածված գերեզմանոցում: Այն կերտվել է 1303 թ. ում Հովհաննեսի կողմից՝ ի հիշատակ երկու որդիների.

յԱնայ. այս իմ գիր է՝ Ովանիսի. ես երկու որդի ունի. Ք(րիստո)ս փոխեցաք. մեր յիշատակ ա(ստուա)ծ, / քվ(ին) / ՉԾԲ (1303):

Գերեզմանոցում, ի թիվս տասնյակից ավելի խաչքարերի, աչքի է ընկնում թերևս է դարով թվագրելի քառակող կոթողը, որի հարդարված միայն մեկ նիստին առկա է ողկույզներով բեռնված խաղողի որթագալար:

Քարագլուխ գյուղի մերձակայքում, բնակավայրի հյուսիսարևելյան կողմով ձգվող բլրագոտու բարձրադիր մասերում առկա են հնագույն թաղումներ (N 39°53'55.27", E 45°16'34.51", ծ. մ.




Պեղված դամբարաններից մեկը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

1853 մ և N 39°53'54.36", E 45°16'34.51", ծ. մ. 1854 մ), որտեղ 2018 թ. կատարվել են հնագիտական պեղումներ:



Քառակող կոթող (է դար) Թուխ մանուկ վանքի գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



Խաչքար (1303 թ.) Թուխ մանուկ վանքի գերեզմանոցում (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018-2019 թթ.)



Խուշիքի (Դավիթ քահանայի) խաչքարը. դամբարանադաշտի վերնամասում (N 39°53'56.18", E 45°16'35.83", ծ. մ. 1862 մ) գերեզմանոցի միջնադարյան հատվածն է, որտեղ կանգուն է ուշագրավ և ընդարձակ արձանագրությամբ ևս մեկ խաչքար.

Ի թվ(ի)ս հ(այոց) ՉԽ (1291), | ի հայրա/պետութե(ան) տ(է)ր Ստ(ե)փ(անո)սի որդո՝ Տ/արսաիճին ե/ւ բարեպաշտ իշ/խանին Լ(ի)պարտի, | ես՝ Խուշիք Ուրանշահին, որդի Ա/պնին, կակնեցի զ/խաչս զայս | ինձ եւ եղբար | իմոյ՝ Դաւիթ քահանայի եւ | ամուսնո իմո՝ Քիմա խաթուն/ին, բարեխաւս հոգոց մերոց | [յիշեցէք ի] Ք(րիստո)ս:

Հին Քարագլուխ գյուղատեղի. գտնվում է գյուղի հյուսիսարևելյան կողմում: Գյուղատեղիի տարածքում պահպանվել են հազիվ նշմարվող տնատեղեր և միջնադարյան գերեզմանոցի մնացորդներ (N 39°54'46.37", E 45°17'03.88", ծ. մ. 1902 մ), որտեղ առկա են տեղահան արված մի քանի տապանաքար և խաչքար (բոլորն էլ՝ անարձանագիր):



Խաչքար, 1291 թ. (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018-2019 թթ.)



Հին Քարագլուխ գյուղատեղիի գերեզմանոցը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)




ՍԱԼԼԻ ԳՅՈՒՂԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Տեղադրություն. գտնվում է Եղեգնաձոր քաղաքից ուղիղ գծով 13 կմ հյուսիս-արևմուտք: Ծովի մակերևույթից բարձր է 1540-1640 մ:

Անվանում. ԺԳ դարում Ստեփանոս Օրբելյանի կազմած Վայոց ձորի գյուղանունների ցանկում Սալլին բացակայում է: Այս հանգամանքը, իհարկե, վկայում է՝ ոչ թե այդ ժամանակ գյուղը չկար, այլ, որ այդ ժամանակաշրջանում Սալլին կրել է բոլորովին ուրիշ, հետագայում մոռացության մատնված անուն (ակնհայտորեն շահաբասյան բռնագաղթի հետևանքով):

Բնակչություն. ներկայիս գյուղից փոքր-ինչ հյուսիս գտնվող համանուն հին գյուղատեղիի տարածքում պահպանված նյութական մշակույթի հուշարձանները փաստում են, որ Սալլին գավառի հնամենի գյուղերից մեկն էր, որը դարեդար հայաբնակ է եղել մինչև շահաբասյան բռնագաղթը: ԺԹ դարի սկզբներին հայաթափ գյուղատեղիում հաստատվել են թյուրքական ծագմամբ մահմեդական ցեղեր, որոնք էլ արդեն նոր գյուղը լքել են շուրջ մեկ դար անց՝ 1910-ական թթ. վերջերին. «Մամասի ներկա ավերակի բլուրի ա-



Սալլի գյուղի գլխավոր հատակագիծն ըստ Google Earthe 2018 թ. արբանյակային լուսանկարի (հրատարակության պատրաստումը՝ Ա. Հակոբյանի, 2019 թ.)

րևելյան լանջին կա հին գյուղատեղ՝ Սալլի անունով, որից տաճիկ բնակիչները իջնելով դեպի Սելիմի գետակը, հիմնել են այժմյան Սալլին»¹: Արդեն 1920-ական թթ. սկզբներին գյուղը

վերստին դարձել է հայաբնակ: Նրա բնակիչներն էին մերձակա գյուղերից փոխադրված այն հայերը, որոնց նախնիները սերում էին Պարսկահայքի Խոյ և Սալմաստ գավառներից:

¹ Քաջբերունի, նշվ. աշխ., էջ 132:

Սալլի գյուղի բնակչության թվաքանակը մատնանշող տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.


տարեթիվ	հայ	թուրք
1839		77
1873		422
1897		668
1914		624
1926	291	
1931	344	
1939	497	
1959	296	
1970	355	
1979	329	
1989	167	
2001	235	
2004	247	
2012	285	

Պատմական հուշարձաններ. համեմատաբար նորահիմն ներկայիս Սալլի գյուղում պատմական հուշարձաններ չկան, սակայն այդպիսիք առատ են համանուն հին գյուղատեղիում և նրա մերձակայքում:

Սալլի երկրներ (Սալլու այգիներ). այս տեղամասում, որը գտնվում է գյուղից շուրջ 1 կմ հյուսիս-արևմուտք (N 39°53'02.30", E 45°16'10.10", ծ. մ. 1621 մ), առկա են կանգուն, գեղաքանդակ երեք խաչքարեր, որոնցից երկուսն արձանագիր են.



Խաչքարեր Սալլի երկրներ տեղամասում, ԺԳ դար (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)




Խաչքարեր Սալլի երկրի տեղամասում, ԺԳ դար (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

ա Ի ք(վի)ս հ(այոց) ՉԽԱ (1292):
բ ...կակնեցա ...չս / Ք(րիստո)ս ա(ս-
տուա)ծ ողորմ... / ...մած է:

Սր. Մամասի վանք. գտնվում է Սալ-
լի գյուղից 600-700 մ հյուսիս (N
39°53'55.15", E 45°16'22.62", ծ. մ. 1652
մ)՝ մեղմ թեքությամբ արևմտահայաց
սարավանջին:

Բաղկացած է միանավ հորինված-
քով մեկ եկեղեցուց (արտաքին չափե-
րը՝ 8,4 x 5,0 մ), որի հարավարևելյան
կողմում՝ ընդամենը 2 մ հեռու, գտնվում
է համանման հորինվածքով մատու-
չափ (արտաքին չափերը՝ 4,9 x 3,2 մ)
երկրորդ եկեղեցին: Նշյալ երկու շինու-
թյունների որմերի օգտագործմամբ
նրանց միջանկյալ հատվածում առկա
է երրորդ մատուռ-եկեղեցին, որը չա-



Սր. Մամասի վանքի հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի,
2018 թ.)

փերով և հորինվածքով կրկնում է երկ-
րորդին:

Եկեղեցու հարավային և մատուռ-
ման եկեղեցիների արևմտյան ճա-
կատներից բացված մեկական մուտ-
քերը մեկտեղվում են քառակուսի հա-
տակագծով գավթի մեջ: Վերջինս իր
հերթին ունի արևմտյան ճակատից
բացված մեկ մուտք: Որմերը պահ-
պանվել են 1-1,5 մ բարձրությամբ, ուս-
տի լուսամուտների քանակի և տեղա-
դրության մասին պատկերացում կազ-
մելն անհնար է:

Բացառությամբ հարավարևելյան
մատուռաչափ եկեղեցու, որ իրականաց-
ված է համակ սրբատաշ քարով, հա-
մալիրի մնացյալ բոլոր շինությունները
կառուցված են կիսակրի կամ անմշակ
քարով, կրաշաղախով:

Վանքի հիմնադրման վերաբերյալ
ավանդաբար վկայվել է, որ այն

առնչվում է սուրբ Մամասի մասունքներն այստեղ ամփոփելու իրողության հետ. «...Մամասի աւանդութեամբ մեծերից լսելով՝ պատմեն..., թէ (Փրկչական 364 թուին) Մեծին Ներսիսի Հայոց Հայրապետի հետ Կեսարիա գնացող Սինեաց իշխաններն՝ վերադարձին բերել են Մամաս ճգնաւորի մասունքը, և այս տեղից Վայոցձոր անցնելիս՝ հանգիստ են դրել այս մատրան տեղումը, և ապա՝ տարել են Վայոցձոր, ուր Քարազուլիս գիւղից մի վերստ հեռու, մի տափարակ տեղում, ամփոփելով՝ վրան վանք են շինել, որ կայ այժմ քայքայուած՝ Մամասայ վանք անունով...»²:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում սրբատաշ քարով կառուցված փոքր եկեղեցու արևմտյան ճակատին առկա շինարարական բնութի 21 տող արձանագրությունը.

Ի ժամանակին յորում ել զաւրն պար/սից յաշխարհս հայոց եւ զբազում զաւ/առս աւերեաց եւ բազում արիւն հեղին զանմեղաց եւ զայլսն գերեցի/ն ընդ որս եւ զհայր Պաւղոս զպատուակ/ան քահանայն զսնուցիչն իմ սպան/ին եւ մեր որբ մնալով փոքր մի խաղաղանալ երկրիս ես՝ Մէքս քո/րոջ որդի Պաւղոսի, շինեցի զեկեղ/եցիքս յանուն նորա բարեխաւս ն/որա եւ մեր և ընծա յԱռփի զծաղկելոյն / այգին գնեցի եւ տուի ս(ուր)բ Մամասայ եւ / զրեցաք ի տարում Դ (4) աւր ժամ Պետրոս/ի եւ Պաւղոսի տաւնին Բ (2) աւր Պաւղոսի Ա (1) / Մէթին, Ա (1) Խալինաւին. հակառակորդն ՅՃ/ԺԸ (319) հայր(ապետացն) նգ(ովեալ) և առաջի Բ(րիստո)սի մեր մեղացս տեր / (է):

Ես՝ Բարենճորտս, տուի ս(ուր)բ Մամա զծաղկելոյն այգոյն զմեր բաժին Մխիթարա հո/գւոյն ի տարումն Ա (1) աւր ժամ հակառակքն / ՅՃԺԸ (319) հա(յ)ր(ապետացն) նգովեալ եղիցին / ա(ստուծոյ):

Հրատ. Դիվան հայ վիմագրության, պր. III, էջ 170-171:



Սբ. Մամասի վանքի հարավային եկեղեցու արևմտյան ճակատին 21 տողով փորագրված շինարարական արձանագրությունը (լուս. և գրչ.՝ Մ. Կարապետյանի, 2018-2019 թթ.)

² Մմբատեանց Մ., Տեղագիր Գեղարքունիքի Ծովագարդ գաւառի, Էջմիածին, 1895, էջ 539:

Միջանկյալ մատռան մուտքի մեջ՝ հարավային կողմում, առկա է ութտողանի նվիրատվական սույն արձանագրությունը.

[ԹՎ](ին) ՉԽ (1291), / կամաւն ա(ստուծո)յ ես՝ Խորշ/իթ Ուրանշահի որդի/ի, միայրան ուխտի ս(ուր)ք Մամասայ, ետու զիմ / հա(յ)րենիքս Մարաք/անին ս(ուր)ք նահատակիս, ով որ հակառա(կ)ի՝ ՅՃԺԸ (319) (հայրապետացն նգովեալ եղիցի):

Գրակ. Մատենադարան, Գ. Հովսեփյանի արխիվ, քղթ. 91, վավ. 12, ք. 33:

Հրատ. **Քաջքերումի**, նշվ. աշխ., էջ 130: Գիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 172:

Ծանոթ. 1898-1899 թթ. ընդօրինակել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի Բ լսարանի ուսանող տիխիսեցի Միլիտոն Վարդանյանը:



Սբ. Մամասի վանքի փլատակների մեջ առկա են մի քանի այլ արձանագրություններից մնացած առանձին բեկորներ: Այստեղ ուշագրավ են մասնականքի տարբեր կառույցներին պատկանող ճարտարապետական մանրամասները, որոնք սփռված են ինչպես բուն ավերակների մեջ, այնպես էլ նրա մերձակայքում տարածված գերեզմանոցում:








Ճարտարապետական դրվագներ Սբ. Մամասի վանքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



Հատվածներ Սբ. Մամասի վանքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



Նվիրատվական արձանագրություն Սբ. Մամասի վանքում (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018-2019 թթ.)



Ճարտարապետական դրվագներ Սր. Մամասի վանքից (լուս.՝ Մ. Կարապետյանի, 2018 թ.)



Հատվածներ Սր. Մամասի վանքի գերեզմանոցից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



Սր. Մամասի վանքին մերձ տարածված գերեզմանոցում պահպանվել են ԺԲ-ԺԶ դդ. վերաբերող ավելի քան երկու տասնյակ խաչքարեր և բազմաթիվ տապանաքարեր: Նրանցից մի քանիսն արձանագիր են:

ՈԿ ու Բ (1213) կա/նկ(ն)եցաւ խաչ/ս ի բարեխա/ւտութի(ւն) Գր(ի)գ/որէ անորդ/ոյ:

Հրատ. առաջին անգամ:

Ի քո(ւա)կ(անութեան)ս հայ/ից ՈԿԴ (1214) կա/նկեցաւ ս(ուր)ք խաչ/ս ի բարեխաւտութ(իւն) | պարոն Մուկայ, ո/ր նահատակեցաւ ի մ/էջ ալազգե(ա)/ց:

Հրատ. առաջին անգամ:



Բովանդակությամբ ուշագրավ արձանագրություն ունի սույն խաչքարը.

...պարոնութեամբ (°)աւագութեան) | Ուրանշա/իի, որդ/իքս Ուրշ/ահի որդ/իք կռուեց/աք Շահին որդ/ի Հասան սպանք ս(ուր)ք | մաւրս հարձանագրեր,

ով հարէ ի քո արեն գ/նած տվաք Վահանշահ ու/ռեցի հասքա խարիքս:

Հրատ. Դիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 173:

Ծանոթ. հակառակ բավականաչափ հստակ նշմարվող տառերի՝ բովանդակությունը միայն մասամբ է ամբողջանում: Նրանցից իմացվում է, որ սպանությունից հետո, որպես արյան գին, ինչ-որ կալվածք՝ «հայրենիք» է զիջվել:




Գրչանկարները՝ Ս. Կարապետյանի, 2019 թ.



1213, 1214 թթ. և ԺԳ դարի խաչքարեր Սր. Մամասի վանքի գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



ԺԶ դարի խաչքարեր Սր. Մամասի վանքի գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)





Յուրաքանչյուր ազգի պատվաբեր պարտքն է ճանաչել հարազատ օրրանը և ուսումնասիրել Հայրենիքում արարված նախնյաց հիշատակները:

Հայոց Հայրենիքում պատմական հուշարձանները հազարամյակների ընդգրկում ունեն և անհամբելի քանակով ու մեծ խտությամբ տեղաբաշխված են Հայկական ողջ բարձրավանդակում:

Ի տարբերություն բազում ազգերի, որոնցից յուրաքանչյուրն իրականացնում է հայրենի նյութական մշակույթի հուշարձաններին առնչվող ուսումնասիրական տարաբնույթ աշխատանքներ և լուծում նաև դրանց պահպանության խնդիրները, մեր պարագայում նույնն անելու հնարավորությունը հիմնականում սահմանափակված է Հայոց Հայրենիքի՝ սոսկ հայկական պետականության սահմանների ներքո գտնվող տարածքում, ինչպես նաև որոշ պատմական գաղթավայրերում: Այսինքն՝ պատմական անցքերի բերումով հայ ազգի ներկա սերնդին է ժառանգվել մի իրականություն, որն էապես տարբերվում է շատ ու շատ ազգերի առջև նույն ոլորտում ծառացած խնդիրներից:

Այո՛, հեշտ չէ նախնյաց հիշատակներին հետամուտ լինել մանավանդ ցեղասպանության ճանապարհով Հայրենիքիդ տիրացած օտար պետության տարածքում:

Հայրենիքը, անկախ նրա բռնազավթված կամ ազատագրված լինելու իրողությունից, սրբազան է, որտեղ պատմական հուշարձաններն էլ հավաքական առումով Երկիր մոլորակի տվյալ հատվածը հայ ազգին ի բնե վերապահված լինելու մասին ազդարարող «գրանցման վկայականներ» են, որոնք իրենց իսկ գոյությամբ էլ մատնում են պատմական իրականությունը և դրանով անհանգստություն պատճառում որոշ զավթիչ հարևանների:

Ահա այս ըմբռնումների և պարտականությունների գիտակցման թելադրանքով էր, որ սկսած 1969 թվականից՝ ճարտարապետ Արմեն Հախնազարյանը լծվում է Արևմտյան

Հայաստանի և Կիլիկիայի պատմական հուշարձանների փաստագրման գործին և ժամանակի ընթացքում առաջ մղելով աշխատանքները՝ 1982 թ. Գերմանիայի Աախեն քաղաքում հիմնում «Հայկական ճարտարապետությունը ուսումնասիրող» հասարակական կազմակերպությունը:

Տարեցտարի լայնացնելով իրականացվող աշխատանքների ծավալները՝ արդեն 1996 թ. կազմակերպությունը պաշտոնական գրանցում է ստանում ԱՄՆ-ում (Լոս Անջելես), իսկ 1998 թ.՝ նաև Հայաստանի Հանրապետությունում (Երևան): Վերջինս նախ 2000 թ. վերագրանցվում է, իսկ 2010 թ., անփոփոխ պահելով անվանումը, վերակազմավորվում որպես հիմնադրամ:

45-ամյա գործունեության ընթացքում (1969-2014) հիմնադրամն իրականացրել է շուրջ 240 գիտարշավներ դեպի Պատմական Հայաստանի տարբեր շրջաններ, գավառներ և պատմական գաղթավայրեր:

Ստեղծվել է արդեն 400.000 միավորի սահմանագծին մոտեցող թվայնացված պատկերների շտեմարան, որի մաս են կազմում մի քանի հազար չափագրություններ, գրաֆիկական և քարտեզագրական նյութեր:

Ստեղծվել է նաև բնակավայրերի պատմությանն առնչվող տվյալների հատուկ շտեմարան, որն արդեն իսկ հնարավորություն է ընձեռում հյուսելու Մեծ և Փոքր Հայքերի տարածքում գտնվող ցանկացած բնակավայրի պատմությունը:

ՀՅԴԻ հիմնադրամը, սկսած 1997 թ.-ից, ձեռնամուխ է եղել ավարտված ուսումնասիրությունների հրապարակման գործին, որով և անցած տարիներին լույս են ընծայվել ավելի քան 60 միավոր գրքեր, գրքույկներ, քարտեզներ և տպագիր այլ նյութեր:

2006 թ.-ից ի վեր հիմնադրամը ստեղծում է նաև վավերագրական ֆիլմեր:

Ինչպես հրատարակությունները, այնպես էլ վավերագրական ֆիլմերը զետեղված են համացանցում:

Գրքի ստեղծման և տպագրության հովանավոր ՎԱՐԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ